

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(ՏԵՍ ԴԷՂ 135)

ԽԱՇՆԱՏԱԾՈՒԹԻՒՆ ՄԵՂՈՒԱԴԱՐՄԱՆՈՒԹԻՒՆ, ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԵՒ ՀԱՒԱՐՈՒԾՈՒԹԻՒՆ

ԽԱՇՆԱՏԱԾՈՒԹԻՒՆ. — Տեղւոյս բնակչաց գիւղատնտեսական զբաղմանց մէջ սա գլխաւորներէն մին է, առանց որոյ գեղացւոյ մի համար բարեկեցութիւն չկայ: Աշխատաւոր անասունը անոր երկիրը կը հերկէ, ցորենը կը կասու, բեռները կը փոխադրէ, և վերջապէս իր կաշին այլ կը ծառայէ անոր ազանելեաց և ուրիշ առտնին գործուածոց համար: Կովեր, ոչխարներ և այծեր՝ կաթ կու տան, յորմէ կը պատրաստեն՝ եղ, ըսքանչիկ պանիր ու մածուն, որք գրեթէ գեղլըկի մի բովանդակ կերակրեղէնը կը կազմեն: Դարձեալ այծեր և ոչխարներ կու տան բուրդ և միս, յորոց շինականք՝ բուրդէն չուխայ կը հիւսեն իրենց զգեստուց, այսինքն է, լոխայի և լայն շարվարաց համար իսկ մնէն՝ ձմեռուան պաշար կը պատրաստեն՝ խաւառաշնան (դմակի եղով խորոված միս): Զիւերն ու էշեր՝ լեռնային նեղ ճամբաներու միջով բեռներ կրելու կը ծառայեն, էշերն նաև ուղտերու հետ սայլերու կը լծուին: Գեղացի մի չկայ որ մէկ կամ երկու կով, մի քանի այծ ու ոչխար չունենայ, իսկ էշն որ և է անասուն ունող տան անհրաժեշտ ընկեր է: Խաշնադարմանութիւնը վնասագոյն գիւղորէից մէջ բնակչաց զբաղման երկրորդական առարկայ կը համարուի, իսկ լեռնայնոց մէջ իբր առաջին գործ կը նկատուի: Լեռնակողմանց զով ու զուտ օգը և ճոխ արօտավայրքն՝ անտառակոյս լիովին կը նպաստեն խաշնադարմանութեան: սակայն լեռնային գիւղերու մէջ գլխաւորապէս մանր անասնոց դարմանով կը զբաղին, որովհետև կարելի է զանոնք տարւոյ մեծ մասը արօտակ տեղեաց վրայ պահել, մինչդեռ խոշորները ձմեռ ատեն պարզ արօտական ճարակով չեն կրնար բաւականանալ, և բաց ասկէ տարւոյ խոնաւ ժամանակները լեռանց վայրիջից վրայ երթեկեկ կարող չեն: Բնա ասոր համար խաշնադարմանութեամբ ընդհանրապէս զնստագոյն մասին մէջ կը զբաղին:

Խաշնադարմանութիւնն կրնար աւելի բարգաւաճիլ, եթէ տէրերը՝ եղջերաւոր անասուն պահելու և խնամելու մասին՝ բաւական գործնական գիտութիւն ունենային։ Նոցա կենդանինքն, ըր ցերեկ ժամանակ դաշտաց մէջ ման կու գան լեռանց ստորոտը և կը քաղեն երբեմն այն տեղեաց խեղճ խոտը կամ փշոտ թփոց տերեւները, իսկ գիշերները կը քնեն կեղադերու մէջ, որ տեղ տեղ լեռանց մէջ փորուած են՝ ամենևին խաւար որջոց նման՝ որ մի միայն մոնելու ծակ ունին։ Հօն անասունը կ'անցընէ ամբողջ գիշերը բնաւ առանց ճարակի, միայն իւր որոճը որոճալով և այն օգոյ ապականութենէն զանազան հիւանդութիւններ ստանալով։ Այդ գոմերը տարի մի ամբողջ չեն մաքրեր, և հետեապէս մէջն ալ աղտեղութիւնը թանձր խաւեր կը կազմէ՝ դանդաղ կերպով օգոյ մէջ լուծուելով։ Զմեռ ատեն անասունը գիշնէյից (*) վրայ կ'արածի, բայց երկարատե ձմեռները այդ գիշնէյք իսկ անբաւական են անոնց. անոր համար մի քանի տեղերէն եղջերաւոր անասունը կը քնեն Երասխի ափերը կը տանին, ուր կը մնուցանեն զանոնք ճախնային բոյսերով կամ կանգառներով։ Յաճախ կը պատահի որ գեղացին կարող չի լինիր անոնց համար կանխաւ բաւական քանակութեամբ ճարակ ամբարել՝ մանաւանդ երաշտութեան տարիներ, այն ատեն անասունը անօթութեամբ կը տուայտի. ուստի և գիւրին է իմանալ՝ թէ ինչո՞ւ հօս եղջերաւոր անասունը ընդհանրապէս խիստ քիչ կը մեծնայ։ Գեղացիք չեն ուզեր կամ չեն կարող ըմբռնել՝ անասունը լաւ դարմանելու և անոնց տեսակները բարւոքելուն շահեկանութիւնը. իսկ օտար կողմանց ընտիր տեսակները ձեռք բերելու և շատցընելու մասին, (օրինակի համար՝ նրբագեղմն ոչխարաց, պարսկային այծերու և այլոց), ոչ ոք կը մտածէ։ Նմանապէս բնաւ փորձ չեն ընէր անասունը պահելու եղանակը բարւոքելու և որ չարագոյնն է՝ կը վախեն և չեն ուզեր իրենց սովորութիւնները թողուլ։ Հայ բնակչաց ընդունակութիւնն ու հեռատեսութիւնը՝ մանաւանդ գաղթականաց, յիշաւի յոյս կու տայ՝ որ գիւղական տնտեսութեան նկատմամբ եղած օգտակար նորաձեւութիւններ՝ ուրիշ ամենէն աւելի իրենց մէջ գործադիր ընդունողներ պիտի գտնեն. բայց խնդիրը սա է՝ որ ոչ ոք անոնց լաւ օրինակներ կու տայ։

Տեղւոյս ոչխարները դմակաւոր տեսակի կը պատկանին, որոնք դմակաց մեծութեան և գեղման գունոց համեմատ՝ այլ և այլ անուններ ունին, ինչպէս՝ Բըյքաւ, Գէրիկ, Դըմոյ, Շալպաղ և Քեւաւմաւ։ Ասոնց մէջ ամենէն ընտրելագոյն կը համարուին

* Գիշնէյ՝ լեռան հարաւային կողմը դարձած կողը։

բըլբաժ և գէրիկ, յորոց առաջինը իւր գեղմանն սպիտակ գու-
նովը կ'որոշի, իսկ երկրորդը՝ շառատ կամ սևադոյն գեղմովն,
ու կարճ դմակով. առաջին տեսակը մեծաւ մատամբ ֆիւրտերը
կը դարմանեն։ Այս տեղ եղջերաւոր անասունն՝ ինչպէս՝ նաև
ամէն տեղ՝ շատ մի հիւանդութեանց ենթակայ է, զորս տեղա-
ցիք պէսպէս ընտանեկան գեղերով ու միջոցներով կը բժըշկեն
և կախարդական զօրութիւն մի կ'ընծայեն իրենց հնարից. որ
մասնաւորապէս մուսուլման բնակչաց մէջ յաճախեալ է։ Սովո-
րաբար խոյոյ և ոչխարաց հիւանդութիւնքը ասոնք են. Ուսպա,
Ուպկեա, Քեսափաւազ, Ներմ, Պաւնտ, Տապախ և խելագարու-
թիւն։ Ոսպան կ'ապաքինեն ծաղկի-քար կոչուած՝ (իբր թէ
կարկտի հետ Բրկնքէն ինկած) խորհրդաւոր քարով մի, որ գու-
ցէ օդաքար լինի։ Այդ քարը մի քանի օր չրոյ մէջ կը դնեն
և յետոյ այն շրով ոչխարի վիրաւոր տեղերը կը թրջեն։ Ու-
կեան՝ հիւծախտն է, որոյ դէմ առողջարար միջոց չկայ. նմա-
նապէս թոքային հիւանդութիւն է և քեափանկն՝ որ իբր թէ
կերակրէն՝ յառաջ կու գայ։ Տապախն՝ կծղակաց մէջ երեցած
վէրքն է։ որոյ դէմ կը գործածեն՝ պաղլեղ, քարիւղ, կտա-
ւածի իւղ, և այլն։ Պաւնտ՝ յօդացաւի նման ախտ մ'է, որով
ոչխարի ոտքերն կը բռնուին։ Այս բոլոր հիւանդութեանցմէ
աւելի տարածուածը Ներմն է. Ներմոտ ոչխարաց գեղի համար
ածխախառն թան կը խմցընեն. իսկ խելագարութիւն կամ պը-
տոյտ, որով ոչխարները յանկարծ կենալով՝ կը սկսին չորս կող-
մը դառնալ կամ ուղղութեամբ մի վազել, բնակչաց ըսածին
համեմատ՝ քանի մի թունաւոր բոյսերէն կը պատճառուի. ասոր
դէմ գործածուած միջոցն է՝ հրաշէկ երկաթով ոչխարին ճակա-
տը խանձել։ Խոյք և ոչխարը յաճախ թունաւորուելով կը սատ-
կին, մանաւանդ գարնան Դարաղաղըզի մէջ տեսակ մի բոյս կը
բուսնի՝ որ ուտող անասնոց վրայ մի ակնթարթի մէջ չարա-
չար կը ներգործէ։ Քարա-դլուխ գիւղի բնակիչք կը պատմէին
թէ յամին 1866 երկու ժամուան մէջ իրենց հօտէն 25 խոշոր
և 65 փոքր անասուն սատկեցան։

Այժմերու տարածուած հիւանդութիւնքն համարուած են՝ Խոք
և Խարափախախ։ Առաջինն այս է՝ որ կենդանւոյն մարմնոյն
վրայ բշտեալ վէրք կ'երևի, որ ստատիկ կսկիւթ կը պատճառէ
անոր. ասոր դէմ կը գործածեն՝ աղաջուր, կտաւատի իւղ,
քարիւղ, և այլն. իսկ խարափախախն այժի թոքային հիւան-
դութիւնն է։ Բոլոր յիշեալ հիւանդութիւններէն զատ՝ եղջե-
րաւոր անասունն ենթակայ է նաև տեսակ մի շանճանճից
խայթուածքի, որոնք ծիծերուն վրայ կ'աչելով՝ արեւն կը ծծեն,
որով անասունը սաստիկ կը հիւծի։